

Իրավունք

Մշակույթ

Չկա Հասարակության
ասանց իրավունքի
Ubi societas ibi jus

Երկշաբաթեր
թիվ 8 (28)
2008 թ. մայիսի 15

Սիրելի հայրենակիցներ,
Ինչպես քաջատեղյակ եք, արդեն մեկնարկել է Սարգու իրավունքների հայկական դպրոցի (ՄԻԴԴ) շենքի կառուցման համար հասարակության աջակցության մասնակցության գործընթացը:
ՄԻԴԴ-ն եզակի հաստատություն է, որը, գտնվելով Լոռու մարզկենտրոն Կանաձոր քաղաքում, տարիներ շարունակ արդյունավետ ծրագրեր է իրականացնում Հայաստանի ողջ տարածքում՝ հատկապես «Սարգու իրավունքներ» առարկայի մասնագետների պատրաստման հանրօգուտ գործում:



Ուրախությամբ հայտնում ենք, որ սույն հաստատությունը նախատեսվող մասնաշենքի կառուցման գործին մասնակցություն է աջակցություն ցուցաբերել «Իմ բաժին քարը ՄԻԴԴ շենքին» աստվածահաճո նախաձեռնությանը:

Օրինությամբ՝
Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյան
Առաջնորդ Գուգարաց թեմի

Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը, ով ներկայումս գլխավորում է Սարգու իրավունքների կրթության զարգացման խորհուրդը, դեռևս 2006 թվականի դեկտեմբերին Սարգու իրավունքների հայկական դպրոցի շենքի կառուցմանը աջակցելու նպատակով երաշխավորագիր-մանակ է ուղարկել միջազգային շնորհատու կազմակերպությունների: Նամակում մասնավորապես ասվում է՝



Սարգու իրավունքների հայկական դպրոցը յուրօրինակ հաստատություն է, որ գործում է մայրաքաղաքից դուրս, հաջողությամբ իրականացնում է ծրագրեր ամբողջ հանրապետությունում և կարող է կարևոր դեր խաղալ տարածաշրջանում մարդու իրավունքների կրթության զարգացման և խաղաղության հաստատման գործում: 2001 թ. սեպտեմբերից «Սարգու իրավունքներ» առարկան մտցվեց Հայաստանի հանրապետական դպրոցների պարտադիր պետական ծրագիր: Սա մեկ այլ պատճառ էր, որ մենք իրատակ քայլեր ձեռնարկեցինք դպրոցի շենքի շինարարությունը նախաձեռնելու համար: Կանաձորի քաղաքապետը Սարգու իրավունքների հայկական դպրոցի համար քաղաքի կենտրոնական մասում արդեն տարածք է տրամադրել, իսկ ՅՈՒՆԿԵՄ արդեն ավարտել է շենքի նախագծումը:

Դպրոցը պարբերաբար մասնակցել է միջազգային ցուցահանդեսների և երկու անգամ պարգևատրվել դիպլոմով՝ «Նորագույն մեթոդների արդյունավետ կիրառում» անվանակարգով: Ես սիրով խնդրում եմ ձեզ աջակցել Սարգու իրավունքների հայկական դպրոցի կառուցմանը՝ հավաստիացնելով, որ այն կդառնա խաղաղության, ժողովրդավարության և մարդու իրավունքների փարոս տարածաշրջանում: Կանխավ շնորհակալ եմ ձեր աջակցության համար:

Արամ Քոչարյան
Լոռու մարզպետ

2008 թ. մայիսի 1-15-ը Մարդու իրավունքների շենքի կառուցման նպատակով նվիրատվություններ են ստացվել Լոռու, Գեղարքունիքի, Արարատի, Սյունիքի մարզերից 109 մարդու կողմից

1. Գրետա Հակոբյան, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (20 քար՝ 5,000 դրամ)
2. Արմենակ Հակոբյան, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (20 քար՝ 5,000 դրամ)
3. Արամ Մարտիրոսյան, Լոռու մարզ, Աթաշի հիմն. դպրոց (4 քար՝ 1,000 դրամ)
4. Նարգիզ Քոչարյան, Լոռու մարզ, Աթաշի հիմն. դպրոց (2 քար՝ 500 դրամ)
5. Գայիկա Մարգարյան, Լոռու մարզ, Աթաշի հիմն. դպրոց (2 քար՝ 500 դրամ)
6. Մերանիկ Քարյան, Լոռու մարզ, Աթաշի հիմն. դպրոց (4 քար՝ 1,000 դրամ)
7. Մարգարիտա Բոջոյան, Լոռու մարզ, Աթաշի հիմն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
8. Կարինե Սոխիկյան, Լոռու մարզ, Աթաշի հիմն. դպրոց (2 քար՝ 500 դրամ)
9. Երգա Անտոնյան, Լոռու մարզ, Աթաշի հիմն. դպրոց (2 քար՝ 500 դրամ)
10. Գայանե Մարտիրոսյան, Լոռու մարզ, Աթաշի հիմն. դպրոց (3 քար՝ 750 դրամ)
11. Մարիամ Հովհաննիսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (2 քար՝ 500 դրամ)
12. Լուսինե Մանուկյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
13. Հայկ Մանուկյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (4 քար՝ 1,000 դրամ)
14. Քրիստինե Սարգսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (2 քար՝ 500 դր.)
15. Անժելա Մարգարյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դր.)
16. Կարեն Հովհաննիսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (2 քար՝ 500 դր.)
17. Գևորգ Չաքարյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
18. Աննանա Անդրեասյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դր.)
19. Հայկուհի Հարությունյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
20. Արաքսյա Կարապետյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
21. Անի Մարգարյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
22. Արարատի մարզի Հովտաշատի միջն. դպրոցի 9՝ դասարան (4 քար՝ 1,000 դրամ)
23. Տիգրան Կարապետյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
24. Հայկ Խաչատրյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
25. Լիլիթ Անդրեասյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
26. Մարիամ Բաղդասարյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
27. Լիլիթ Դարբինյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
28. Քրիստինե Դարբինյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դր.)
29. Սուսաննա Կարապետյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
30. Լուսինե Սարգսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
31. Գրիգոր Գրիգորյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
32. Գեղամ Գրիգորյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
33. Արուսյակ Թորոսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
34. Աննա Բոլոբյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (2 քար՝ 500 դրամ)
35. Սուրեն Կրիստոսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (2 քար՝ 500 դրամ)
36. Սիմոն Անդրեասյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (2 քար՝ 500 դրամ)
37. Հովհաննիսե Բաղդասարյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
38. Լուսինե Գալստյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
39. Արվան Խաչատրյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
40. Անի Հարությունյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
41. Շուշան Հովհաննիսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
42. Մարինե Ղազարյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
43. Լիլիթ Մարտիրոսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
44. Կարգեռա Փանոսյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դր.)
45. Դիանա Չաքարյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
46. Սուսաննա Մրավյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
47. Լիլիա Մրավյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)
48. Տիրուհի Համբարձումյան, Արարատի մարզ, Հովտաշատի միջն. դպրոց (1 քար՝ 250 դրամ)

→ էջ 7

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում	էջ 2
Սարգու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի արտահերթ զեկույցը	էջ 2
Սարգու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտի ուղերձ	էջ 3
Մամուլի ազատության միջազգային օր	էջ 3
Հայաստանը մասնակցեց Աշխարհի մեծագույն դասին	էջ 4
«Խաղաղ Հայաստան. քաղաքացիական նախաձեռնության ֆորում»	էջ 5
Լևոն Սարգսյան. «Սպասող պատվահանրությունը»	էջ 6
Սուրբ Գրիգոր Տաթևացի. «Ինչ է մահը...»	էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ	էջ 8

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԴԱՍԻՆ

2008 թ. ապրիլի 23-ին Երկրի մոլորակի ժամային երեք գոտիներով միաժամանակ աշխարհի շուրջ 100 երկրներում Հանրահանուր կոչ հանուն կրթության քարոզարշավի շրջանակներում տեղի ունեցավ աշխարհում երբևէ անցկացված մեծագույն դասը, որին մասնակցած տվորողների թվի վերաբերյալ տվյալներն ազդարարեցին համաշխարհային նոր մրցանիշի սահմանման փաստը, այն է՝ 7.5 միլիոն մարդ:

Հայաստանում ևս մրցանիշային ցուցանիշ գրանցվեց. երկրի տասը մարզերում աշխարհի մեծագույն դասին մասնակցեց 7.974 մարդ 105 կրթական հաստատություններից և կազմակերպություններից՝ գրանցելով նաև մեծագույն դասի ազգային մրցանիշ:

Աշխարհի մեծագույն դասին տարբեր մարզերում ու բնակավայրերում իրենց մասնակցությունը բերեցին նաև ճանաչված քաղաքական գործիչներ, կրթության ոլորտի պատասխանատու անձինք:

Հայաստանյան դպրոցներում աշակերտներն աշխարհի մեծագույն դասին լրջորեն էին նախապատրաստվել՝ ձևավորելով պատի թերթեր, նկարազարդ պատաստներ, լուսանկարներով և վավերագրման թերթիկներով արձանագրելով իրենց մասնակցությունը, հնչյուն նաև կազմելով տպավորիչ ուղեղներ:

Ստորև ներկայացնում ենք մարզերում մասնակցությունը ըստ ներկա պահին ունեցած տվյալների՝ մասնակիցների ջանակի հաջորդականությամբ:

ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆ - 2487

Աշխարհի մեծագույն դասին Հայաստանի Հանրապետության մարզերից մասնակցության ցուցանիշներով առաջատարը



մայրաքաղաք Երևանն է: Մեծագույն դասին մասնակցել են Հայկական բաց համալսարանը և Երևանի 25 դպրոցներ (ընդհանուր թվով՝ 2487 մարդ), ընդ որում՝ մասնակցության աննախադեպ ցուցանիշ է գրանցվել թիվ 84 դպրոցում՝ 630 մասնակից, թիվ 190 դպրոցում՝ մասնակիցների թիվը կազմել է 607 մարդ: Երևանի թիվ 65 դպրոցում Աշխարհի մեծագույն դասին մասնակցել է ժամաչված իրավապաշտպան Պարույր Հայրիկյանը, թիվ 115 դպրոցում՝ Ազգային ժողովի պատգամավոր



Վարդան Հակոբյանը, իսկ թիվ 189 դպրոցում կազմակերպված դասին՝ Մենելեմնթի համալսարանի ռեկտոր Ռուբեն Առուշանյանը: Երևանի Ն. Աղբալյանի անվան թիվ 19 դպրոցի 4-րդ դասարանի աշակերտ Սիմոն իր ուղեղնում գրել է. «Սիրելի պաշտոնյաներ, խնդրում ենք ձեզ թույլ չտալ մեր երկրում աղքատություն, անդադիտություն, արտագաղթ: Բոլոր երեխաներն ունենան բուժվելու, սովորելու, հանգստանալու իրավունք: Օգնեք սոցիալապես անապահով, ծնողազուրկ երեխաներին»: 4-րդ դասարանի աշակերտուհի Լիլիթ Թարվերդյանն աշխարհի պաշտոնյաներին է ուղղել իր մանկական-հասուն խոսքը. «Դիմում ենք ձեզ, աշխարհի բարի թեղիներ: Ես մեկն եմ այն միլիոնավոր երեխաներից, որոնք սիրում և շատ են ցանկանում սովորել: Ես և իմ նման շատ-շատերն ունենք մի մեծ երազանք՝ լինել կրթված և խելացի մարդիկ: Ուզում ենք, որ աշխարհում չլինեն պատերազմ ու սով, որ բոլոր երեխաներն ունենան անող մանկություն: Դուք խոստացել էիք, որ աշխարհի բոլոր երեխաները կկարողանան ստանալ ան-

վճար կրթություն: Ես այսօր ունեմ այդ հնարավորությունը, բայց շատերը չունեն: Խնդրում եմ նրանց անուճից, թույլ մի տվեք, որ նրանք մնան անզրպեղ, հնարավորինս շուտ ձեռք մեկնեն նրանց, չէ՛ որ ոչ մի մեղք չունեն, որ անուսում են: Հնարավոր է, որ նրանք մեզ է վաղվա գիտնականը կամ բժիշկը: Խնդրում եմ՝ մի մոռացեք մեր մասին»:

ՍՅՈՒՆԻԷ - 1429

Ամենամեծ թվով՝ 23, կրթական հաստատությունների մասնակցությամբ աչքի է ընկել Սյունիքի մարզը (ընդհանուր թվով՝ 1429 մարդ). մասնակցության տպավորիչ ցուցանիշներ են արձանագրվել Կապանի թիվ 6 դպրոցում՝ 236 մասնակից, և թիվ 10 դպրոցում՝ 110 մասնակից: Աշխարհի մե-



ծագույն դասի շրջանակներում ապրիլի 23-ին միևնույն ժամին կրթական ոլորտում առկա խնդիրների, դրանց ծագման պատճառների և լուծման ուղիների վերաբերյալ քննարկումներ են անցկացրել Սիսիանի թիվ 1, 3, 4 դպրոցները, Կապանի Կրթության ազգային ինստիտուտի բաժանմունքը, վարժարանը և թիվ 1, 6, 9, 10 դպրոցները, Քաջարանի թիվ 1 և 2 դպրոցները, Խալաթի, Նորաշենի, Տանձավտի, Դավիթ Բեկի, Ծղուկի, Գեղանուշի, Վ. Գյոդաբլուխի, Չագեծորի, Օխտարի, Դովրուսի, Տեղի թիվ 1 դպրոցները:



ԼՈՈՒ - 1010

Լոռու մարզից Աշխարհի մեծագույն դասին մասնակցել են տասը կրթական հաստատություններ թե՛ Վանաձորից, թե՛ մարզի մյուս քաղաքներից ու գյուղերից՝ Ստեփանավան, Ալավերդի, Մարգահովիտ, Պուշկին, Գուգարք և այլն (ընդհանուր թվով՝ 1010 մարդ): Սկտիվ մասնակցություն է ցուցաբերել Վանաձորի թիվ 6 դպրոցը՝ 427 մասնակից, Ալավերդի թիվ 12 դպրոցը՝ 200 մասնակից:

ԿՈՏԱՅՔ - 1047

Ուշագրավ դասեր են անցկացվել մարզի 18 ուսումնական հաստատություններում: Ստացված տվյալների համաձայն՝ 190 մարդ մեծագույն դասին մասնակցել է Հրազդանի թիվ 14, 140-ը՝ Արզակամի դպրոցում (ընդհանուր թվով՝ 1047 մարդ):

ՏԱԿՈՒՇ - 562

Տակուշի մարզպետարանի կրթության վարչության պետ Աշոտ Փաշինյանը ներկա է գտնվել Իջևանի թիվ 1 դպրոցում անցկացված մեծագույն դասին, որին մարզից իրենց մասնակցությունն են բերել տասը կրթական հաստատություններ (ընդհանուր թվով՝ 562 մարդ), այդ թվում՝ Իջևանի թիվ 5, Նոյեմբերյանի թիվ 1, Ինչպես նաև Պտղավանի, Ենոքավանի, Սարիգոլուի, Օաղկավանի դպրոցները: Բերդավանի և Բերդի թիվ 3 դպրոցներից մեծագույն դասին մասնակցել է համապատասխանաբար 110 և 100 մարդ: Իջևանի թիվ 1 դպրոցի աշակերտուհի Հայկուհի Ղազարյանն աշխարհի ղեկավարների հասցեագրված իր ուղեղ-



ծում նշում է. «Ես պահանջում եմ, որ պահանջը ձեր տված խոստումը, և որ աշխարհի բոլոր երկրներն ապահովվեն որակյալ կրթությամբ», իսկ Աստղիկ Դավթյանն անկեղծ ցանկություն է հայտնում իր բոլոր հասակակիցներին կիրք ու ուսյալ տեսնելու: «Պետության պարտքն է պաշտպանել յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը, ապահովել դասագրքերի մատչելիությունը, պարտաստել որակյալ մասնագետներ, դպրոցն ապահովել տեխնիկայով, գույքով», անփոփված է Նոյեմ-



բերյանի թիվ 1 դպրոցի աշակերտների կազմած ուղեղնում:

ԱՐՄԱՎԻՐ - 500

Աշխարհի մեծագույն դասին Արմավիրի մարզպետարանի կրթության վարչության աշխատակիցներն ու վեց կրթական հաստատությունների ուսուցիչներն ու աշակերտներն են մասնակցել (ընդհանուր թվով՝ 500 մարդ): Մարզում մասնակցության լավագույն ցուցանիշով առանձնա-



նում է Վարդաշապատի թիվ 8 դպրոցը՝ 236, և մարզպետարանի կրթության վարչությունը՝ 105 մասնակիցներով: Ակտիվություն են ցուցաբերել նաև Արմավիրի թիվ 2, Վարդաշապատի թիվ 2, Ինչպես նաև Դաշտի, Ալենալիճի, Աղավնատան դպրոցների ուսուցչական և աշակերտական խմբերը:

ԱՐԱՐԱՏ - 643

Արարատի մարզում աշխարհի մեծագույն դասին մասնակցել են 9 ուսումնական հաստատություններ (ընդհանուր թվով՝ 643 մարդ): Մասնակիցների առավել մեծ թվով, ըստ ստացված տվյալների, առանձնանում է Ուկետապի թիվ 2 դպրո-



ցը՝ 260 մասնակից, Արարատի թիվ 2 դպրոցը՝ 120 մասնակից, 100 մարդ է մասնակցել Արաբգի դպրոցում:

ՇԻՐԱԿ - 81

Շիրակի մարզում աշխարհի մեծագույն դասին մասնակցել է Գյումրու թիվ 19 դպրոցը, որ կազմակերպված դասին և քննարկմանը մասնակցել է 81 մարդ:



ԳԵՂԱՐՔՈՒՆԻԷ - 175

Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուրի և Վարդենիսի թիվ 3 դպրոցներում (ընդհանուր թվով՝ 175 մարդ) համապատասխանաբար 120 և 55 մասնակիցներ են վավերագրել իրենց մասնակցությունն աշխարհի մեծագույն դասին:

ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ՎԱՆԱԶՈՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱՄԱՀԱՎԱՔ-ՆԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ

Սիրելի՛ հայրենակիցներ

Ներկայումս բացառիկ հնարավորություն է ստեղծված Լոռու մարզկենտրոն Վանաձոր քաղաքում՝ կառուցելու Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքը՝ միջազգային ուսուցողական մի կենտրոն, որպիսին չկա հարևան և ԱՊՀ երկրներում, և որը հաջողությամբ գործում և զարգանում է արդեն 12 տարի:

Միջազգային կազմակերպությունները մեծապես խրախուսում են այս ծրագիրը, սակայն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է, որ մենք ևս մեր համեստ, բայց կարևոր ներդրումն ունենանք այս գործում:



Մեզնից յուրաքանչյուրը կարող է հիրավի ի՛ր բաժին քարը նվիրաբերել կառուցվող շենքին՝ հատկացնելով ընդամենը 250 դրամ և դրանով իր մասնակցությունը բերել այս կարևոր ծրագրին՝ նպաստելով Մարդու իրավունքների կրթության զարգացմանը:

Կոչ ենք անում բոլոր նրանց, ովքեր կարևորում են մարդու իրավունքների իմացությունն ու հարգանքը, արժևորում են շենքի կառուցումը, մտահոգ են Լոռու մարզի, Հայաստան աշխարհի ապագայով, մասնակցել դրամահավաք-մարաթոնին՝ նպաստելով Հայաստանում և տարածաշրջանում մարդու իրավունքների միջազգային ուսուցողական կենտրոնի հիմնադրման նվիրական գործին:

2008 թ. մայիսի 17-ին՝ ժամը 11.00-ից 21.00-ը, Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ Լոռու մարզպետարանի, Վանաձորի քաղաքապետարանի և Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի համագործակցությամբ կազմակերպվում է մարզային դրամահավաք-մարաթոն՝ «Իմ բաժին քարը Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքին» նշանաբանով:

Փոխանցումները կարելի է կատարել հետևյալ բանկային հաշվեհամարին.
 001-093392-001 (հայկական դրամ)
 Էյչ-Էս-Բի-Սի (HSBC) բանկ – Հայաստան ստացող՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
 նպատակ՝ «ՄԻՀԴ շենքի համար»:

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 22967 կամ 44781 հեռախոսահամարներով:



Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Դ տարի
 Հիմնադրի և հրատարակիչի
 Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
 ՀՀ, 2003, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրք., թիվ 2
 Հեռ.՝ +374 (322) 2-29-67/
 հեռապատմուն՝ +374 (322) 4-47-81
 Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
 Դեմոնստրացիայի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Գևորգ Մանուկյան
 Խմբագիր՝ Զեյնեբ Բաբուռյան
 Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հիշումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
 Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
 Ստորագրված է
 տպագրության 2008 թ. 05.14:
 Տպագրակազմ՝ 2000:
 Տպագրվել է «Չանգակ-97»
 հրատարակատանը:

Իրավական մշակույթ
 Legal Culture
 Правосая культура
 Տարածվում է անվճար